



# Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



### ԽԱՉԿԵՐԱՅԷՆ ԵՏՔ ԻՆՆԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

13 ՆՈՅԵՄԲԵՐ 2022

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ

#### ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(25.9-26.7)

**Ա**յն օրը պիտի ըսեն. «Ահա ահա քանի մեր Տէր Աստուածը, որուն ապաւինած էինք: Անիկա փրկեց մեզ, որովհետեւ ի՛նքն է Տէրը որուն յուսացած էինք: Յնժանք եւ ուրախանանք մեր փրկութեան համար»: Որովհետեւ այս լերան վրայ Աստուած մեզ պիտի պաշտպանէ, իսկ Մովաբը պիտի կոխկռտէ այնպէս՝ ինչպէս յարդը կը կոխկռտեն կամնասայլով: Այո՛, Աստուած իր ձեռքը պիտի երկարէ եւ զայն խեղճացնէ ու կորուստի մատնէ, զայն վար բերելով այն բարձունքէն որուն կը ձգտէր ան: Աստուած պիտի փլցնէ քու բարձր եւ ամուր պարիսպներդ, ո՛վ Մովաբ, զանոնք գետնին հաւասարեցնելով: Այն օրը Հրէաստանի մէջ հետեւեալ երգը պիտի երգեն. «Զօրաւոր է մեր քաղաքը, որովհետեւ մեր Փրկիչը ի՛նքն է անոր պարիսպն ու պատուարը: Բացէ՛ք դռները, թող ներս գայ արդարութեան հետեւող եւ ճշմարտութիւնը պահող ժողովուրդը. այն ժողովուրդը, որ

ճշմարտութիւնը կը պաշտպանէ եւ խաղաղութիւնը կը պահպանէ: Միշտ քեզի՛ յուսացինք, Տէ՛ր, ո՛վ Աստուած, մեծ եւ յաւիտենական. դուն, որ խոնարհեցուցիր եւ վար ձգեցիր երկինքի բնակիչ հրեշտակները, պիտի կործանես նաեւ մարդոց հզօր քաղաքները եւ զանոնք գետնին պիտի հաւասարեցնես: Խոնարհներն ու հեզերը միայն պիտի բնակին այդ քաղաքներուն մէջ, եւ տնանկները պիտի երթան հոն հաստատուելու: Բարեպաշտներու ճամբան ուղիղ է, Աստուած հարթած եւ պատրաստած է անոնց ճամբան»:

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

#### ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ

#### ՆԱՄԱԿԷՆ

(1.1-11)

**Պ**օղոս եւ Տիմոթէոս, Քրիստոս Յիսուսի ծառաներս, կը գրենք ձեզի՛ Քրիստոս Յիսուսի միացած բոլոր հաւատացեալներուդ որ Փիլիպպէի կողմերը կը բնակիք, ինչպէս նաեւ եպիսկոպոսներուն ու սարկաւագներուն: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէրը Յիսուս Քրիստոս

չնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Ամէն անգամ որ ձեզ յիշեմ՝ գոհութիւն կը յայտնեմ իմ Աստուծոյս: Ամէն անգամ որ ձեր բոլորին համար կ'աղօթեմ՝ ուրախութեամբ կ'աղօթեմ, որովհետեւ առաջին օրէն մինչեւ հիմա ձեր մասնակցութիւնը բերիք աւետարանչութեան գործին: Եւ վստահ եմ թէ Աստուած, որ այդ բարի գործը սկսաւ ձեր մէջ, զայն իր կատարումին պիտի հասցնէ մինչեւ Քրիստոս Յիսուսի օրը գայ: Իրաւունք կը համարեմ այսպէս խորհիլ ձեր բոլորին մասին եւ ձեզ սիրտիս մէջ ունիմ, որովհետեւ բոլորդ ալ մասնակից եղաք ինծի վիճակուած շնորհքին, ըլլա՛յ բանտարկութեանս ընթացքին, ըլլա՛յ երբ ազատ վիճակով Աւետարանը կը պաշտպանէի ու կը հաստատէի: Միայն Աստուած գիտէ թէ ո՛րքան կարօտցած եմ ձեզ, Քրիստոս Յիսուսի գործովը:

Իմ աղօթքս է որ ձեր սէրը աւելի եւ աւելի աճի աստուածգիտութեամբ եւ կատարեալ դատողութեամբ, որպէսզի կարենաք լաւը ընտրել եւ Քրիստոս իր գալստեան օրը ձեզ գտնէ մաքուր եւ անբասիր, եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ արդար գործերով հարստացած՝ պատճառ ըլլաք որ Աստուած փառաւորուի եւ գովուի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ  
ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
(9.44-50)

**Մ**ինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ. «Լա՛ւ մտիկ ըրէք եւ մի՛ մոռնաք ասիկա. մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: Սակայն աշակերտները չհասկցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միւս կողմէ ալ կը վախնային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները, սկսան վիճաբանիլ թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանգնեցնելով ըսաւ. «Ով որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս ընդունած է, ընդունած կ'ըլլայ զիս զրկողը: Որովհետեւ ով որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է, ան է մեծը»:

Յովհաննէս ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ քու հետեւորդներէդ չէ»:  
Յիսուս ըսաւ. «Արգելք մի՛ ըլլաք իրեն. որովհետեւ ան որ հակառակ չէ ձեզի, կը նշանակէ թէ ձեր կողմն է»: